ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ մէջ հիմակուան ատենս քանի՜ վանօրայք կան չէն ու բնակած․ քանի՜ են ընդհանրապէս բնակչաց թիւը․ ի՞նչ կերպ կ'ըլլայ կառավարութիւննին․ վանականաց կրօնական և ուսումնական յառաջադիմութիւննին ի՞նչ վիճակի մէջ է ։

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Պատերազմ գորտերու և մկանց ։

ԹՈՒԵՊԷՏ մարդկան պարզութեան ժամանակը ու գիտութեանց սկիզբը եղած է առակաց գիւտը, բայց չէ թէ միայն պարզամիտ մարդկանց ու տղայոց օգտակար են, այլ և քաղաքական մարդկութեանս ալ․ որ հայլիի մը վրայ նկարուածի պէս կը տեսնէ առակաց օրինակներու մէջ իր բարոյական պատկերը․ ու իրմէ օտար էնթակայներով խաբուելով ու նորութեամբը զուարճանալով կը խրատուի ու կ'ուղղէ զինքը շատ անգամ առանց իմանալու ։ Եւ թէ ի՞նչպէս զօրաւոր է առակը ու ազդու, կը տեսնենք Աստուածաշունչ գրոց մէջ ալ, ինչպէս որ կարճ առակով մը Յովաթամ կ'ողբայ եղբարցը կոտորածը, ու սպառնալիքով մը կը գուշակէ Աբիմելէքայ բռնակալութիւնը ։ Պզտի առակով մը Ագրիպպաս Հռովմայ ժողովրդեան ահագին խռովութիւնը ու ապստամբութիւնը մէկ վայրկենի մէջ կը խաղաղցընէ․ առակով Եսովբոս բոլոր Յունաց խրատիչ մը ըլլալէն ետքը, բոլոր մարդկութեան ալ դաստիարակ կը սեպուի ։ Ան պատճառաւ յարգ ունեցեր է առակը որ հին քննիչներէն ոմանք հաստատեր են թէ Հոմերոսի Իղիական ու Ոդիսական քերթուածներն ալ առակներ ըլլան․ ուր զանազան աստուածոց ու դիւցազանց անունները մարդկային կրքեր ու ձիրքեր նշանակեն, ինչպէս Աքիլլէս Իղիականին մէջ բարկութիւն կամ մարդուս ցասմնական զօրութիւնը, Աթենաս խոհական մտաց կառավարութիւնը, որ զինքը կ'ուզէր ուղղել․ ասոր նման ուրիշ մասերն ալ, և ամբողջ Ոդիսականը ։ Աս խորհրդածութիւններով անարժան չսեպեցինք ու ոչ ալ անվայելուչ Հոմերոսի՝ գորտանց ու մկանց պատերազմը՝ որ իր անուամբը երևելի եղած է, ռամկօրէն թարգմանել, ու բարեկենդանի զուարճութեան մը տեղ ընծայել մեր ազգին բանասիրացը ։ Կարծես թէ Հոմերոս առջի դիւցազներգութեանցը վախճանը համառօտելով կ'ամփոփէ աս կենդանեաց ծաղրական պատերազմին մէջ․ ու միանգամայն կը ցուցընէ՝ թէ ոչինչ պակաս ծիծաղելի են մարդկային կրքերն ալ, և շատ անգամ անոնց վախճանն ալ ։

ԵՐԳԱՍԱՑՈՒԹԵԱՆՍ սկիզբն կ'աղաչեմ զքեզ գերագոյն Արամազդ, որ Եղիկոն լեռը բնակող Մուսաները ղրկես ինծի օգնական․ վասն զի ես ինքիրմէս չեմ կարող համառօտել քաջին Արեսի բազմախուռն պատերազմը, որ աստուած կ'ըսուի ու աստուածային պատանի ։

Կ'աղաչեմ զձեզ ամենքնիդ ալ որ լաւ միտ դնէք, և բացէք ականջնիդ՝ որ լսէք թէ ինչ պատճառաւ ու ինչպէս մկները մեծ պատերազմ մը ըրին գորտերուն հետ, և մարդկան նմանեցան, ան հին ահաւոր հսկայ մարդկան, ինչպէս կը պատմեն ու կ'երգեն ։

Ատենօք մուկ մը կատուէ մը փախչելու ատեն ծարաւած՝ արիւն քրտինք մտած՝ լիճը ինջաւ որ ծարաւը անցընէ, ու մեծ փափաքով մը թուշը խոթեց ջրին մէջ ։ Հոն գորտ մը հարցուց իրեն․ Հիւրիկ, ո՞վ ես դու և ուստի՞ կու գաս հոս․ բարեկամաբար ըսէ ինծի ճշմարիտը, ո՞վ են քու ծնողքդ, ինչե՞ր ըրեր է քու ցեղդ, բան մի՛ ծածկեր ինծմէ ։ Թէ որ ճշմարտախօս ըլլաս, ինծի բարեկամ կ'ըլլաս, ու զքեզ կը մտցընեմ

որ տեսնես բոլոր իմ բնակութիւնս , ու բարեկամական պարգևներով ես կը դարձընեմ՝ ուսկից որ եկար : Վասն զի ես կը տիրեմ աս լճիս , զոր կը տեսնես , ու կը թագաւորեմ հոս բնակող գորտերուն վրայ : Իմ անունս Այտուռոյց[1] է . հայրս մայրս ո՛վ է ան ալ ըսեմ քեզի . հայրս Տղմապտիռ[2] կ'ըսուի՝ մայրս Տամուկ[3], երկուքն ալ զիս սնուցին իրենց ուրիշ որդւոցը հետ Երիդանոս[4] գետին մէջ . հոն իրար ճանչցան , իրար սիրեցին ու ամուսնացան , ու զիս ծնան աս գետին եզերքը : Ըսէ քու ծնողքդ ալ՝ որ բարեկամ ըլլանք . վասն զի դու որ զիս աչքով դէմ առ դէմ կը տեսնես , աս ալ գիտնաս որ գեղեցկութեանս ու զօրութեանս համար թագաւորութիս ձեռք ձգեր եմ :

Ան ատենը պատասխանեց մուկը ու ըսաւ . ինչո՞ւ ծնողքս կը հարցընես . թող իմ անունս , որ Ասիա ու Եւրոպա ամենուն յայտնի է , երկնքի թռչուններուն , աստուածներուն ու մարդկան : Բայց թէ կ'ուզես ու կը բաղձաս յիշատակս ունենալ , ծնողացս անունը , որպէս զի միտքդ պահես , մեծ ուրախութեամբ մը կ'ըսեմ քեզի . բայց նախ իմ անունս լսէ . Փշրաքաղ[5] կ'անուանեն զիս , որ չեմ ուրանար : Մեծահոգի Հացակուրծին[6] որդին եմ , որ երկայնաստև է ոզնիի պէս , մայրս ազնուատոհմ , զոր Մեղրալէզ[7] կը կոչեն , շատ անգամ կ'երևայ սպիտակ շրթունքներով , ու Ճարպակուրծ[8] թագաւորին դուստրն է կ'ըսեն : Ասիկայ զիս ծնաւ ու բերաւ քաղցր օդուս մէջ , տարաւ զիս հիւղը շատ աշխատութեամբ , ու մարդկային կերակուրներով զիս մեծցուց ու ընտիր բաներով . թուզով , ընկուզով , կաղինով և ազնիւ նշով . հիմա ալ առատութեամբ կը լեցընեմ փորիկս : Բայց ինչպէս դու , Այտուռոյց , ինծի բարեկամ կ'ըլլաս , որ ամենևին մեր բնութիւնը իրարու չեն նմանիր . իմ ապրելու կերպս մարդկանց պէս է . իսկ դու ջրաբնակ , ու ջրակենցաղ , ու ջրային խոտերով սնանող : Ես ինչ որ կը գտնուի մարդկանց տունը , ամենէն կուտեմ համարձակ , ամենևին անաշխատ : Ինծմէ արգիլուած չէ աղէկ խըմորած հացը , և ոչ գեղեցիկ մեղրաշէն քաքարը[1] , և ոչ հաւկթախառն ու առատ սուսամով ազնիւ կարկանդակը[2] , և ոչ շաքարոտ ճերմակ պատառը[3] , և ոչ նոր մակարդած պանիրը՝ որ կաթով կը շինեն , և ոչ լակոնացի[4] փափուկ պանիրը և ուրիշ տեսակ տեսակ ընտիր պանիրները : Ինծմէ չեն ծածկուիր անուշեղէնի տեսակները՝ որոնք ամենուն սիրելի են , որոնց երկնային դիք ալ կը բաղձան : Եւ ոչ ան կերակուրները ու դահամունքները որ խոհակերք լաւ գիտնալով կը պատրաստեն , մէջը աւոր համեր ալ կը ձգեն , որոնք Հնդկաստանէն կը բերեն ու անոնցմով համեմունք կը շինեն :

Ես պատերազմներու մէջ հանդիպեցայ , և ոչ երբէք փախայ մահուընէ . ո՛վ որ կը վախէ մահուընէ՝ պատերազմէն չդառնար : Թէ որ պէտք ունենամ , ոչ երբէք վահանի կը վազեմ . հապա յառաջամարտիկներուն հետ խառն կը կռուիմ : Աւելին ըսեմ՝ մարդկանցմէ չեմ վախնար . և այս ճշմարիտ է , և ոչ քու առջևդ ընդունայն պարծանք : Կ'երթամ անոր անկողինը՝ ուր կը պառկի , կը խածնեմ մատը , չիմանար , կը խածնեմ սրունքը , ամենևին փոյթ չըներ , անուշ կը քնանայ ինչուան կը խորդայ : Երկրիս վրայ եղածներէն փոյթ չունիմ . բայց կատուէ ու ուրուրէ խիստ կը վախեմ , ու ծուղակէն՝ որ մենք ամենքնիս ալ կ'ատենք , վասն զի նենգութեամբ կը սպաննէ , ես ալ կը վախեմ : Կատուն ուր որ տեսնամ , ուր որ կասկա-

1 Այս անունները Հոմերոս հնարած է գորտոց և մկանց բնաւորութեանց յարմար . մենք ալ յունարենէն թարգմաներ ենք ըստ կարի ճիշդ նշանակութեամբ . Այտուռոյց կը նշանակէ թուշերը ուռած :

2 Տիղմ խառնող :

3 Խոնաւ , նեմ :

4 Որ է Իտալիոյ մեծ գետը հիմայ Փօ ըսուած :

5 Փշրանք ժողվող :

6 Հաց կրծող :

7 Մեղր լզող :

8 Ճարպ [illegible] կըրծող :

1 Տճ. Պէօրէկ :

2 Տճ. Պօղաչա :

3 Տճ. Լօքում :

4 Սպարտա շինուած :

ծիմ, վախէս կը փախչիմ շնչասպառ։ Հոս ու հոն կը սպասեմ՝ ինչուան որ իրմէ ազատիմ, ու մօտ ծակ մը գտնեմ, դիմեմ ու ծածկուիմ, որ չըլլայ թէ զիս բռնէ ու խղդէ, ու աս գեղեցիկ մարմնոյս մէջ իր ճիրանները մխէ։ Աս իրեքը կը գտնուին դաշտի ու լեռներու մէջ ինծի ու իմ ազգիս մահաբեր թըշնամիք։ Բայց դու ամէն բանէն կը վախես, մեծէն ու պզտիկէն, սողուններէ ու թռչուններէ, մարդկանցմէ ու ուրիշ կենդանեացմէ. և ինչպէս որ առակը կը զրուցէ քու շուքէդ ալ կը վախես։ Քու խիստ ձայնդ միայն ինչ ըլլալդ կը յայտնէ։ Ես բանջարով ու լճի խոտերովը չեմ սնանիր, ոչ կաղամբով[1], ոչ կարոսով[2], ոչ պրասով ու ոչ բողկով[3]. որոնցմով դուք կը կերակրիք ու անոնցմով կը զուարճանաք, խեղճ լճաբնակներ։

Ան ատենը Այտուռոյցը իր գեղեցիկ սովորեալ կերպովը նայեցաւ Փշրաքաղին՝ ու պատասխանեց ըսելով։ Շատ կը պարծիս, բարեկամ, կոկորդիդ վրայ. և թէ ինչպէս քաղցրաւենեօք փորդ կը լեցընես։ Մեր քովն ալ կերակուր կը գտնուի մեր կենացը համար, ջրի ու ցամաքի վրայ կը ծնանին մեր ուտելիքները։ Արամազդ կրկին շնորհք պարգևեց մեզի վայելելու. երկիրս՝ ուր պարենք, ու ջուրն ալ ուր պահուըտինք. ներս, ու դուրս ունինք տուն բնակելու։ Դէ որ կ'ուզես եկու մէկտեղ մտնենք. ելիր կռնակս, ու դիւրութեամբ զքեզ մտցընեմ. բայց պինդ բռնէ զիս որ չիյնաս, զքեզ չեմ թողուր։ Երբ որ մըտնենք, հաւատա ինծի շատ պիտի զուարճանաս. ու ելլելու ատենդ ալ պարգևներ ու գեղեցիկ ընծաներ կ'ունենաս։

Աս խօսքս լմնցուց և կռնակը իրեն դարձուց. մուկն ալ ազատաբար նստաւ վրան, ու համարձակութեամբ թաթիկները ու վիզը երկընցուց։ Գորտը սկըսաւ քաշուիլ ու ամփոփուիլ. մուկը 'ի սկզբան ուրախացաւ, ու տեսնելով թէ ինչպէս գեղեցիկ կը լողար, կը զարմանար, ու կ'ապշէր։ Բայց երբոր սկսան ցամաքէն հեռանալ, ու լճին խորը ջրի մէջ երթալ, և կու գային սև ալիքները վրան կը լեցուէին, սկսաւ դողդղալ ու աչքերէն արցունք թափել։ Զղջացեր էր, ու չէր գիտեր ընելիքը. վասն զի անկարելի էր ետ դառնալը. միայն ոտքերը կը սղմէր գորտին կողերուն, ու անդադար կը ճչար, և չէր տեսներ թէ ուր կ'երթայ։ Յանկարծ ջրային ահաւոր օձ մը երևցաւ գետին մէջ, գորտը սարսափեցաւ ու ընելիքը չէր գիտեր. մէկէն ջրին մէջ ընկղմեցաւ, որպէս զի փախչի անոր բարկութենէն. Փշրաքաղն ալ թողուց որ մինակ լողայ։ Դողլուն պէս սաստիկ վախէն բոլորովին կիսամեռ, ջրին մէջ տարածուեցաւ մուկը, թաթիկները կը սղմռտէր, ակռաները կը կրճտացընէր, ուժը կորսնցուց ու ոտուըները կը դողային։ Շատ անգամ խորը կ'ընկղմէր, ու նորէն նորձութեամբ ոտքերը բոլոր ուժովը զարնելով երեսը կ'ելլէր, անկարելի կ'ըլլար ազատել մարմինը, և ոչ ալ փախչիլ մահուընէ ու փրկել իր կեանքը. Թիակի մը պէս ջրին վրայ պոչը կը քաշէր, ու աստուածները օգնութիւն կը կանչէր որ ազատեն մահուընէ. սկսաւ ցաւագին բերնով զրուցել։

“Այնպէս դրաւ զիս գորտը իր թիկանցը վրայ, ինչպէս ատենօք Արամազդ ցուլ ըլլալով՝ առաւ կռնակը Եւրոպայն յափշտակելով զանիկայ Սիդոնիայէ, ու ինկաւ մեծ ծովը և բռնութեամբ Կրետէ կղզին տարաւ, որովհետև Արամազդ սքանչելին հոն կը բնակէր...” Ինչուան հոս շարունակեց խօսքը, վասն զի սկսաւ գլուխը վար ծռել ու բերանը ջուր երթալ, մորթը թրջեցաւ ու ծանրացած վար կը քաշէր զինքը ու խորունկը կը ձգէր։

Հոն պզտի ձայնը ուզեց ուժով մը հանել, կամացուկ կամացուկ կը խօսէր ու խեղճ կը թափէր. կ'անիծէր գորտը, որ պատճառ եղաւ զինքը այս անյոյս կորստեան մէջ ձգելու։ “Չես կրնար փախչիլ, կ'ըսէր, չես կրնար կերպով մը ազատիլ, ամենաչար Այտու-

1 Տճ. Լահանա։ 2 Տճ. Քերէվիզ։ 3 Տճ. Թուրփ։

ռոյց, և ոչ կեանքդ պահել. հապա չաւ բաչար ու խիստ մահուամբ պիտի սատակիս, որ այսպէս անզգամութեամբ զիս սպաննեցիր. զիս կենակդ առիր ու ջուրը մտար, ետքը թողուցիր որ խղդուիմ. անշուշտ քան զիս լաւագոյն էիր, որ ցամաքի վրայ պատերազմիր, ու կռուելով ինծի պէս յաղթող ելլայիր, և ոչ քան զիս երագոտն ու կտրիճ մեռնամարտ. ուրիշ բանի չէիր գար, բայց եթէ զիս այսպէս խաբելու։ Տեսնէ Աստուած անիրաւութիւնդ ու դատաստանդ կըտրէ, ու անողորմ պատժէ անիրաւները։ Իմ անիրաւ մահուանս վրէժխնդիր գան մինչեւ բանակներ ու քթէդ բերնէդ բերեն չարութիւնդ ,,։ Այսքը կտրեց ու պակսեցաւ ձայնը, ու ձկտելով՝ հոգին փչեց։

Աստուածով հոն գտնուեցաւ Պնակալէզը[1]. տեսաւ եղածը, ու աշխատութիւն յանձն առնելով գնաց մէկալ մէկներուն իմացընելու աս բանս։ Գտաւ զանոնք մէկտեղ ու ըսաւ. լսեցէք բարեկամք, մեր ազնիւ Փշրաքաղը խղդեցին գորտերը։ Անոնք աս բանս լսելուն պէս ակռանին կրճտացընելով մունետիկներ հանեցին՝ որ ելլէն կանչեն, ու շուտ մը խորհրդի նստուի։ Այս շուտով ալ ժողվեցան ամէնքը Հացակուրծին առնը, որ էր հայր խեղճ Փշրաքաղին, որուն դիակը տարածեալ կը լողար ընդ մէջ, ու ինչպէս պանդուխտի մը վրայ լացող մը ու ողբացող չգտնուեցաւ։

Այրբոր ժողվեցան, բարձր իշխանի մը պէս կանգնեցաւ Հացակուրծը, թէ պէտ տխուր. կեցաւ անոնց մէջ տեղը, դադրեցուց ողբը, սրբեց արցունքը ու սկսաւ ըսել։ Ով մտերիմ բարեկամք, հալք իմ և եղբարք, ամէնքնիդ ալ սգակիցք իմ ցաւոյս. պէտք է որ յիրաւի իմ վշտացս կարեկից ըլլաք, վասն զի չար մահը յափշտակեց որդիքս։ Այրեք զաւակ միայն ծնայ՝ որ իմ ծերութեանս ընկեր ըլլան, մէկն ալ չմնաց ծերութես նեցուկ, իրենց ծաղիկ հասակին մէջ ի-ջան գերեզման։ Անդրանիկը սպաննեց անզգամ կատուն. երբոր կը վազվզէր գուրսը, բռնեց զինքը, անոր հետ քիչ մը խաղաց, ետքը կերաւ լափեց։ Մէկալն ալ անգութ մարդիկ բռնեցին ծուղակին մէջ որ սարսափելի բան մըն է. շատերը զանիկայ որոգայթ կ'անուանեն, որ չարաչար կը կորսնցընէ մինչեւը, ու կը յափշտակէ մահուամբ։ Այրրորդն էր ամենէն սիրելին թէ ինծի թէ իր մօրը. շատ կը սիրէինք զինքը, վասն զի մէկ հատիկ մնացեր էր. ուսկից զրկեցին զիս խաբեբայ գորտերը, ու ծածուկ ձգեցին զինքը ընդ մէջ որ մեռնի։ Անպէտ և ես միայն կրեցի այս դըժբաղդութիւնը, բայց հասարակաց ամենուն է նախատինքը. թէ որ կ'ուզէք, որ անվրէժ չթողունք, պէտք չէ ուշանալ, պատերազմի ելլենք ու անհոգ չըլլանք։ Օ՛ինուց զանազան հնարքներ գտնենք ու զրահաւորինք, ժողվուինք երթանք վրանին ,,։ Այսքը լսընցուց, ու ամէնքը պատասխանեցին. մեռնինք ամէնքնիս, ու բանակեցան։

Հիմա լսեցէք ասոնց զէնքերուն տեսակները. կանաչ բակլաները մէջ տեղանքէն ձեղքեցին ու սրունքնին պլեցին. կանթեղներու ծածկոյթը վահանի տեղ առին, մախաթները՝ նիզակի տեղ, կանաչ սիսեռներու[2] կեղևը անցուցին գլուխնին, ու բոլոր մարմինին աղէկ մը զինեցին։ Կատուի մորթ գըտան, ու լանջապանակներ[3] շինեցին, որպէս զի իրենք զիրենք ահաւոր ցուցընեն. այսպէս մինչեւը զինեալք էին։

Լսեցին գորտերը մինչեւուն իրենց դէմ բանակով գալուն լուրը, առանց ուշանալու ելան ջրէն, ու տեղ մը ժողվուեցան, սկսան քննել թէ ինչ է ասոնց իրենց դէմ գրգռուելուն պատճառը. տարակուսեր մնացեր էին թէ ինչ բանի համար թշնամացեր են մինչեւը։ Հասաւ պատերազմի նուիրակը Պոյտնամուտը[4], որ մեծանձն Պանրալէզին որդին էր. գաւազանը ձեռքը, գնաց ու մօտեցաւ գորտերուն, և ըսաւ անոնց. Գիտցէք դուք գորտեր, որ մինչեւը բար-

1 Պնակ լզող մուկ. Բառագ Հայոց:

1 Տգ. Զ-Լաբուլ։
2 Տգ. Նոխուտ։
3 Կուրծքի զրահ։
4 Պտուկը մանող։

կացեր են ձեզի, պատերազմ կ'ուզեն ընել հետերնիդ. զիս ղրկեցին որ ձեզի յայտնի ըսեմ, որպէս զի 'ի զէն դիմէք ու առնուք ձեր գեղարդները, վասն զի լսեցին ու տեսան Փշրաքաղին անիրաւ մահը, որ ջրախեղդ եղաւ, զոր չարութեամբ սպաննեց ինչպէս գող մը՝ ձեր Թագաւորը ստախօս Ն.յտուռոյցը, հիմա ալ Թող չտնտնայ զձեզ պատերազմի հանելու. ուրիշ բան չունիմ ըսելիք, ողջ կեցիք ,, ։

Ն.ս խօսքերս խռովեցին գորտերուն միտքը, ամէնքն ալ Ն.յտուռոյցը կը մեղադրէին ու կը յանդիմանէին։ "Ն.ս չեմ պատճառը, կ'ըսէր անիկայ՝ Փշրաքաղին կորստեանը, և ոչ ալ բռնութեամբ խոթեցի զինքը ջրին մէջ. ինքը յանդգնեցաւ ըղալ ինչպէս թէ մեր կարողութիւնը ունենար, ուստի հիմա ինչո՞ւ մկանց ժողովը զիս կը մեղադրեն։ Ն.ս բանի մը մէջ իրենց չեմ անիրաւած. բայց ձեզ տեսնեմ՝ եկէք, ժողովինք, մէկտեղ գանք, գտնանք աղէկ զէնքեր, զինուինք ամէնքնիս, ու սպասենք լճակին եզերքը. թէ որ գան մկները պատերազմի, դէմ դնենք, որպէս զի գիտնան իրենք ալ թէ ո՞վ ենք մենք։ Ն.ս կը յուսամ որ զիրենք լճակին մէջ թափենք ու հոն ամէնքն ալ չարաչար խրդդուին. ան ատենը ուրախութեամբ հանդէս կը կատարենք մկանց ջնջուելուն վրայ ու կը խաղաղինք ,, ։

Ն.րբոր աս լսեցին, ամէնքն ալ սկըսան զինուիլ խոտերով, որոնցմով որ կ'ապրէին։ Թրթնջուկի [1] տերևներ կը տան ու ոտքերնին պատեցին, խխունջներու [2] կեղևները գլուխնին սաղաւարտ, կակուղ կեղևանքով ալ լանջապանակ շինեցին և ջրային կարոսով թաթպաններ [3], կաղամբի տերևները փրցընելով վահան շինեցին, ու սրածայր պրտուները [4] նիզակի տեղ առին։

Ն.րբոր զինուեցան, կեցան տեղերնին՝ նիզակնին կը ճօճէին, ու ամենուն սիրտը բարկութեամբ ու կատաղութեամբ լեցուած, կ'ելլէին կ'իջնէին ու իրենց քաջութիւնը կը ցուցընէին։

Ն.րամազդ աս բանս կը դիտէր վերէն մեծ ուրախութեամբ. երկինքը նստած՝ աստուածները խորհուրդի կանչեց. "Տեսէք ըսաւ, զինեալներու բազմութիւնը, այսօր շատ արիւն պիտի թափուի. վասն զի կը տեսնեմ գորտերը, որ կատղած հսկայից պէս կ'աղաղակեն լի բարկութեամբ։ Ա՞ինչ կողմանէ կը տեսնեմ մկներուն բանակը, որ կուգան ասոնց դէմ զէնքով պատած կուրծքերնին, բարկութեամբ ու կատաղութեամբ լեցուն՝ ինչպէս վայրենի ցուլեր կամ ուրիշ զօրաւոր ու սաստիկ գազաններ։ Հիմա ես ձեզի կը հարցընեմ աստուածներ, ըսէք Ճշմարիտը, ձեզմէ որո՞նք՝ որո՞նց օգնական կ'ուզէք ըլլալ։ Այց, դու Ն.թենաս սիրելի աղջիկս, կարծեմ ու ապահով եմ որ այսօր դու մկանց կ'ուզես օգնել, վասն զի քու տաճարիդ մէջ կը ցատկտեն անոնք ու կ'ուրախանան՝ նայելով քու բագինդ որ լեցուն է զոհերով, ու կը զուարճանան հոտով, ու իրիկուան կը ժողվին ընթրելու ,, ։ Պատասխանեց Ն.թենաս, "Սիրելի Հայր, մկանց օգնական չեմ ըլլար, անզգամները շատ չարիք կ'ընեն մարդկանցմէ ինծի նուիրուած ընծաներուն։ Ձէթի մէջ կ'իյնան ու կ'ապականեն կանթեղները, կամ սեղանի վրայ կը կրծեն անձեռոցիկները, և ուրիշ ինչ ալ գտնեն նոյնպէս կ'ապականեն, որով զիս շատ բարկացուցեր են։ Մրչափ աշխատեցայ, ոլորեցի, մանեցի ու հիւսելով ինծի զգեստ շինեցի ու պայծառ պատմուճան մը՝ անոր ալ ուզածնին ըրին, բոլոր կրծեցին ու ծակ ծակ ըրին, որ ամբողջ թել մ'ալ չմնաց։ Ն.ս ամէն չարեաց վրայ աս ալ կայ, որ կարօտութեանս համար ուրիշէն փոխ առեր էի մանածս, հիմա փոխատուն կ'ուզէ, ու վաշխն ալ կը պահանջէ։ Ն.ոնց համար զիրենք կ'ամբաստանեմ, հետերնին թշնամութիւն ալ ունիմ, ու չեմ օգներ անոնց կարօտութեանը մէջ։ Այց թէպէտ բարկացեր եմ մկանց, ո՞վ Ն.

1 Տձ. Գոռոռ գոռոռաղը։
2 Տձ. Սայլանիւղ։
3 Ձեռքի և թեւի պրահ։
4 Տձ. Սաղ։

բանագդ, սակայն գործերուն ալ չեմ օգներ․ անոնք ալ անմիտ են, աղաղակող ու ձանձրացուցիչ բնութեամբ, ոմ պիտի օգնէ անոնց։ Անկարելի է որ ինծի ըրածնին մոռնամ․ վասն զի գիշերը չթողուցին որ աչքս գոցեմ․ պատերազմէ դառնալով հոգնած դադրած քնոյ կարօտ էի, բայց աս գարշելիները բոլոր գիշերը կը կարկաջէին աղաղակով, անքուն նեղեցին զիս, ու գիշերը արթուն անցուցի, նեղութեան մէջ ու գլխի ցաւով։ Ասոնց օգնութիւն պէտք չէ երթալ, ով աստուածներ, որովհետեւ այնպէս բանակները իրարու մօտ կը տեսնեմ որ կը վախեմ թէ մենք ալ վիրաւորուինք, երկնքէն դիտենք պատերազմը ու զուարճանանք„։

Երբոր լսեց Աթենաս, աստուածները անոր խօսքին մտիկ ընելով գնացին տեղերնին, ու հանդիսի կեցան։ Արտաց Արամազդ վերէն, պիծակները[1] փողերնին փչեցին, մկները ու գորտերը պատերազմի սկսան։ Մսակերաւաչ (գորտը) որ քաջութեամբ երեւելի էր՝ առջինը եղաւ Մանալէզին երիկամանցը հարուած տալու․ ու գետինը փռեց՝ որ փոշւոյ մէջ թաթխուած մնաց դիակնացեալ։ Երբ Տղմաթաթաւը[2] մխեց նիզակը Ոտակախուզին[3] կուրծքը, որ կտրիճ երիտասարդ մ'էր, ու խաւարամած մահը վրայ հասնելով շունչ մը փչեց հոգին ու մեռաւ։ Մեծապատիւ մեծանուն Մոմալէզն (մուկ) ալ ընկաւ, զոր սպաննեց Կճիճամուտը[4] իր նիզակաւ։ Ոսեհանիկը[5] տեսնելով Մոմալէզին մահը, շատ ցաւեցաւ, ու բարկացած առաւ սրածայր պրտուն, ու երկայն նիզակի ծայրը անցընելով՝ սպաննեց Կճիճամուտը։ Հացակուրծն ալ իր վայրենի կերպովը, յարձակեցաւ անզգոյշ գորտերուն գունդին վրայ, զարկաւ Մեծագոչին[6] փորը ու մէկէն ձըգեց անբարբառ։ Երբոր տեսաւ Ճախնախայլը[1] որ Մեծագոչը գետնի վրայ տարածեալ մեռեր է, յարձըկեցաւ Ծակամուտին վրայ որ հեռի էր՝ զարկաւ ետեւէն նիզակովը վզին ու վրան վազեց։ Հասաւ հոն Արմատակուրծը (մուկ) զարկաւ զէնքէն, բայց չկըրցաւ զէնքը վիրաւորել, ու դարձաւ իր սուր նիզակովը և Ճախնախայլին փորը ծակեց, աղիքը թափեց ու գետինը փռեց․ բոլոր լիճը արիւնլուայ կարմրացաւ։ Պանրակուրծն[2] ալ որ լճին մէջ քնացաւ չարթընալու քնով մը՝ օգնութիւն չգըտաւ․ վասն զի Եղէգնաբնակ (գորտը) ինջեցուց զէնքը դժոխքը՝ որ ուրիշներուն հետ յաւիտեան քնանայ։ Երբ տեսաւ Եղէգնաբնակ՝ Կրընկալէզը[3], որուն չյուսալով թէ կարենայ դէմ դընել, վախէն փախաւ ու վահանը ձգելով լիճը ցատքեց։ Երեւելին Պոյտամուտ սպաննեց Խեփայինը․ երկնցուց ձեռքը, առաւ քարը, վերցուց ու սաստիկ ուժով նետեց վրան․ գլխուն կակուղ մասին եկաւ, ու շուտ մը քթէն ըղեղը վազեցուց, ու գետինը կարմըրցաւ արիւնովը։ Ան ատենը Տղմաբնակ (գորտը) վազեց հեռուէն, զարկաւ նիզակը Պնակալիզի կուրծքը որ կիսամեռ եղաւ․ շուտով մութը պատեց աչքերը։ Պրասեանը աս տեսնալով վազեց, բռնեց զէնքը ոտքէն քաշեց ու լիճը նետեց․ պարանոցէն անանկ բռնեց որ չկըրցաւ փախչիլ խիստ մահուընէ, ու հոն խղդուեցաւ։ Փշրաքաղը դիմեց արագութեամբ որ իր ընտանեացը օգնութիւն գայ․ հազիւ թէ Պրասեանը ցամաքը կ'ելլէր՝ զէնքը զարկաւ նիզակովը Փշրաքաղ պատանին ու առջեւը տարածուեցաւ մեռաւ, ու շուտ մը ինջաւ հոգին դժոխքը։ Կաղամբածածկոյթ (գորտը) վրան հասաւ ու մէկը զէնքը չարգիլեց, առաւ դետնէն տիղմը, լեցուց բուռը, ձգեց երեսը այնպէս սաստիկ որ կուրցընէ Փշրաքաղը ու սպաննէ։ Ան ալ ծռեցաւ, ու բարկութեամբ երկընցուց ձեռքը, մեծ քար մը վերցուց

1 Տզզացող իշամեղուներ։
2 Տղմի մէջ թաթխուող գորտ։
3 Ծակերը պրպտող մուկ։
4 Փոսչերու մէջ մտնող գորտ։
5 Ոսեհան քէօֆթէն սիրող մուկ։
6 Պոռչացող գորտ։

1 Ճահիճներու, լճերու փառք սեպուած գորտ։
2 Պանիր կրծող մուկ։
3 Ոտքին կոճը լզող մուկ։

գետնէն, զարկաւ Կաղամբածածկութին ոտքերուն, կոտրեց ոսկրները, ու հոն խոտերուն վրայ ձգեց։ Քանի որ սրունքները տարածած հոգին փչելու վրայ էր, վազեց Կառանչոտ¹ անոր օգնութեան. Փչրաքաղը դարձուց առիւծաբար իր պրտուեայ նիզակը, զարկաւ անոր փորը ու երիկամունքը դուրս քաշեց ու փռեց աղէքը։ Ծակախոյսը² տեսաւ աս, վախցաւ, փախաւ պատերազմէն ու փոսի մը մէջ պահուըտեցաւ, չուզեց վտանգի մէջ ձգել մարմինը, ու ընտրեց նախատալից կեանքը։ Ան ատենը մկներէն մէկը թողուց զանոնք ու ելաւ գնաց տուն որդին կանչեց պատերազմի, որ գայ թշնամեաց դէմ զարմանալի քաջութիւնները ցուցընէ։ Շուտ մը եկաւ Ալաղիրկը³, ու շատ չարիք կը սպառնար գորտերուն. ընկոյզը կիսէն բաժնեց ու ծածկեց կռնակն ու թիկունքը, ու նիզակը ձեռքը վազեց գորտերուն վրայ, որ սարսափած շուտ մը լիճը վազեցին ու պահուըտեցան։

Թէ որ կանխատեսն՝ Արամազդ չողորմէր, բոլոր գորտանց կորուստը հասեր էր, անոր համար գլուխը շարժեց ու այսպէս կանչեց. Ո՜հ ո՜հ, ինչ կը տեսնեն աչքերս այսօր, ո՜րչափ տխրեցուց զիս աս Ալաղիրկը որ այսպէս կը ջարդէ խեղճ գորտերը։ Ղրկեմ Աթենասը կամ քաջ Արէսը որ Ալաղիրկին նիզակը յափշտակէ։ Այսպէս ըսաւ Արամազդ. իսկ Արէս պատասխանեց իրեն. Գիտցիր, ո՛վ սատուրնեան Արամազդ, որ գորտերուն խմբին ոչ Աթենաս և ոչ ես Արէս կրնանք օգնութիւն հասնիլ, բայց եթէ դու ալ ամէն աստուածներով մէկ տեղ գաս. իսկ թէ որ կ'ուզես որ քու բարկութիւնդ ալ դադրի, հրամայէ շանթիդ որ իջնէն ու գորտանց սատակիչ անգութը այրէն մրկէն, ինչպէս խրկեցիր երբեմն ու այրեցիր Սալմոնեանը⁴. դարձեալ քու շանթդ կորընցուց կատաղի ամբարտաւան հսկաներն ալ որ ամէնքը գիտեն։

Լուեց Արէսը, ու Սատուրնեանը արձըկեց կատաղութեամբ ու բարկութեամբ վառուած նետերը, նախ որոտաց ու երկինքը թնդացուց, ետքը շանթովը երկիրս դողացուց։ Բայց և ոչ անանկով յաղթութենէն ետ կեցան մկները, որ ինչպէս գայլերը՝ որ ցիր ու ցան կ'ընեն ոչխարները, այնպէս կը ցըրուէին պատերազմող գորտերը, որոնցմէ շատերը ջուրը ընկան ու փոսերուն մէջ ծածկուեցան. ամէնքն ալ ջարդուբուրդ կ'ըլլային, թէ որ Արամազդ նորէն իր զօրութիւնը ու նոր օգնութիւնը չղըրկէր։ Յանկարծ նո՛ր ազգ մը ղրկեց որ գոռոզութեամբ մը վազեցին հասան. ասոնց գլուխը ուսերնուն վրայ էր, աչքերնին կուրծքերնուն վրայ, ոտուըննին ութնական, քալուածքնին կողմնակի։ Բերաննին պղտի մկրատներով շարուած, մարմիննին բոլորովին պինդ ոսկրէ ըլլալով գրեթէ միս չունէին. կռնակնին կլոր և ուսերնուն վրայ փայլուն. ըղունգնին սուր կատուի ճանկերու պէս, երկերկու գլուխ ունէին, բայց ձեռք չունէին, բերաննին ալ սուրի պէս կը կտրէր. խիստ հրէշաւոր ազգ մըն էր աս՝ որ խեչափառ¹ կ'ըսուի։ Ասոնք սկսան մկանց պոչերը կրտըրտել, ոտքերն ու ձեռքերն ու նիզակները թափել. մեծ վախ մը տիրեց մկանց բանակին մէջ, ու թողուցին փախան, մէյմէկզի ցրուեցան։ Արեւն ալ մտաւ ու ծածկեց այն ահաւոր պատերազմը որ մէկ օրուան մէջ սկսաւ ու լըմընցաւ։

1 Պոռչացող գորտ։
2 Ծակերը կեցող գորտ։
3 Ուրիշներուն ձեռքէն յափշտակող մուկ։
4 Պեղոպոնեսի թագաւոր մ'էր, որ կ'ուզէր աստուծոյ տեղ պաշտուիլ. Արամազդ ալ կայծակով զարկաւ՝ դժոխք իջեցուց, կ'ըսեն առասպելք։

1 Տճ. Չաղանօզ։

Գաղղիոյ անկելանոցաց թիւն ու նկարագիր։

ԳԱՂՂԻՈՅ մէջ հիմա 1,133 անկելանոցաց տեսչութիւն կայ, 1,130 թաղի մէջ բաժնուած. Ասոնցմէ շատ անկելանոց ունեցողներն են Վօքլիւզ, Վար, Հօ-Ռէն, Նորտ, Սէն-է-Ուազ ու